**ՆԱԽԱԳԻԾ**

**ՆՈՐ ՓՈՍՏԱՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ**

1. **Ընթացիկ իրավիճակը.**

«Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Ընկերություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ազգային փոստային օպերատորը: Հիմնադրվել է 1994 թվականի հոկտեմբերի 12-ին՝ որպես պետական ձեռնարկություն՝ ապահովելով Հայաստանի փոստային կապի գործունեությունը: 1998 թվականի ապրիլին վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) և ներկայումս գործում է նույն կազմակերպաիրավական կարգավիճակով: Ընկերությունը մատուցում է ունիվերսալ փոստային ծառայություններ և իրականացնում է միջազգային փոստափոխանակում՝ Համաշխարհային փոստային միության շրջանակներում:

Ընկերության բաժնետերն ու միակ սեփականատերը Հայաստանի Հանրապետությունն է, որի անունից Ընկերության կառավարումն իրականացնում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը:

Այսօր «Հայփոստ» ՓԲԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության հանրային փոստային ցանցի կառավարչական մարմինը՝ տնօրինելով 783 փոստային բաժանմունքներ ՀՀ ողջ տարածքում, ինչպես նաև 1 միջազգային փոստափոխանակման կենտրոն և 23 մարզային տեղամասեր, փոստային տրանսպորտ, տեղեկատվական տեխնոլոգիաների և անվտանգության ենթակառուցվածքներ:

Ընկերությանը պատկանող՝ Երևան քաղաքի Տիգրան Մեծ պողոտա 1-ին նրբանցք թիվ 1 հասցեում գտնվող փոստափոխանակման և տեսակավորման կենտրոնը (այսուհետ նաև՝ Կենտրոն) կառուցվել է 1960-ական թվականներին: Այն հանդիսանում է քառահարկ, նկուղային հարկով, 8037 քմ մակերեսով շինություն (1800քմ-ն օգտագործվում է որպես փոստափոխանակման և տեսակավորման մաս, 1200 քմ՝ որպես պահեստ, իսկ մնացած տարածքները շահագործման ենթակա չեն), որտեղ

իրականացվում են ներպետական և միջազգային փոստային առաքանիների ընդունման, մշակման, տեսակավորման և բաշխման գործընթացները:

Կենտրոնի դիրքը իր նպատակային և աշխատանքային արդյունավետ գործունեության համար գտնվում է ոչ բարենպաստ վայրում: Այն շրջապատված է բնակելի շենքերով և տներով, իսկ դեպի Կենտրոն տանող ճանապարհը բեռնատար մեքենաների համար գրեթե անանցանելի է:

Կենտրոնի կառուցման ժամանակ փոստի փոխանակումը կատարվում էր երկաթգծի միջոցով, սակայն ներկայումս նամակներն ու ծանրոցները փոխադրվում են կցորդիչով բեռնատարներով: Շինության խիտ կառուցապատման պայմաններում այս գործընթացը ստեղծում է տրանսպորտային բարդություններ, քանի որ բակային տարածքի սահմանափակ չափերը չեն ապահովում միաժամանակ մի քանի բեռնատարի մուտքի հնարավորություն: Բացի այդ, տարածքն ունի միայն մեկ մուտք և ելք, ինչը լրացուցիչ խնդիրներ է առաջացնում տրանսպորտային միջոցների տեղաշարժի համար:

Կենտրոնում առկա է երկու փոխակրիչ՝ նախատեսված բեռնաթափման և բեռնավորման համար, սակայն դրանց անմխիթար վիճակը խոչընդոտում է աշխատանքի բնականոն ընթացքը՝ բացասաբար անդրադառնալով գործընթացների արդյունավետության վրա: Բացի այդ, բեռների տեղափոխումը բաժինների միջև իրականացվում է սայլակների և հին, բեռնատար վերելակների միջոցով, ինչը պահանջում է զգալի ֆիզիկական ջանք և հանգեցնում առաքանիների՝ հարկերում բաշխելու անհարմարությունների: Այս մեթոդը ոչ միայն երկարացնում է գործընթացը, այլև նվազեցնում է աշխատանքի արդյունավետությունը և տարածքի օպտիմալ օգտագործումը: Ի լրումն՝ միջազգային առաքանիների մաքսային տեսազննումն իրականացվող տարածքի սահմանափակ լինելու հետևանքով զննման գործընթացը դանդաղում է, ինչը հանգեցնում է առաքանիների՝ մաքսային ստուգման ուշացմանը:

Շենքի նկուղային հարկում առկա են կոյուղու դիտահորեր, որոնք պարբերաբար խցանվում են՝ առաջացնելով արտահոսքեր: Նկուղով անցնող ջրագիծն ունի վնասված հատվածներ, որոնք պահանջում են անհապաղ հիմնանորոգում: Շենքում

բացակայում են կենտրոնացված ջեռուցման և հովացման համակարգերը, ինչի հետևանքով որոշ տեղամասերում կիրառվում են տեղային ջեռուցման տարբերակներ, ինչն էլ իր հերթին առաջացնում է հավելյալ ծախսեր: Ստեղծված իրավիճակը բացասաբար է ազդում աշխատակիցների աշխատանքի պայմանների վրա:

Բացի այդ, Կենտրոնում բացակայում են հրդեհաշիջման համակարգերը, ինչը բարձրացնում է անվտանգության ապահովման հրատապ անհրաժեշտությունը: Հարկ է ընդգծել է նաև օդափոխության համակարգի (մաքսային գոտիների որոշ հատվածներում բացակայում է նաև բնական օդափոխությունը), սանհանգույցների և առաջին բուժօգնության կետի անհամապատասխանությունը ժամանակակից պահանջներին: Հայփոստի ներկայիս գործառնական հնարավորությունները սահմանափակված են գործող ենթակառուցվածքների հզորություններով, ինչը խոչընդոտում է միջազգային փոստային փոխադրումների արդյունավետ կազմակերպմանը և Համաշխարհային փոստային միության (UPU) S58 և S59 անվտանգային և որակական ստանդարտներին համապատասխանությանը:

Կենտրոնի շենքի շահագործման ընթացքում դրա երկհարկանի հատվածները վերակառուցվել են՝ յուրաքանչյուրը վերածելով երկու հարկի՝ առանց համապատասխան ամրացման: Ավելացված մետաղական կոնստրուկցիաները չեն համապատասխանում ժամանակակից շինարարական պահանջներին, և շենքը երբևէ չի ենթարկվել հիմնանորոգման: Վերջին տարիներին իրականացվել են միայն մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ հիմնականում առաջին և չորրորդ հարկերում:

2024 թվականին «Սեյսմաէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից կատարված տեխնիկական գնահատման համաձայն՝ շենքի սեյսմիկ խոցելիության մակարդակը գնահատվել է բարձր. հնարավոր 8 բալանոց (MSK-64 սանդղակով) երկրաշարժի դեպքում շենքի կոնստրուկցիաներում կարող են առաջանալ ուժեղ՝ 4-րդ աստիճանի վնասվածքներ՝ համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի: Արձանագրվել է նաև, որ շենքի ծավալահատակագծային և կառուցվածքային լուծումները չեն համապատասխանում ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին: Ըստ փորձագիտական եզրակացության՝

շենքի ֆիզիկական մաշվածության աստիճանը գնահատվել է 35%, իսկ տեխնիկական վիճակը՝ 2-րդ աստիճանի, ինչը նշանակում է, որ հիմնական կոնստրուկտիվ տարրերը պիտանի են շահագործման համար, սակայն պահանջում են կապիտալ նորոգում:

Հաշվի առնելով Կենտրոնի գործառնական կարևորությունը՝ անհրաժեշտ է վերանայել դրա տեխնիկական պայմանները և ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ իրականացնելու Կենտրոնի արդիականացման համապարփակ ծրագիր: Շենքի սեյսմակայունության բարձրացումը, տեխնոլոգիական արդիականացումը և անվտանգության համակարգերի ներդրումը պետք է դիտարկվեն որպես առաջնահերթություն՝ ապահովելու Կոնտրոնի անխափան գործունեությունը և ծառայությունների որակի բարձրացումը:

Այնուամենայնիվ, հիմնանորոգման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ կլինի մասնակի կամ ամբողջությամբ շենքն ազատել առնվազն 1.5-2 տարի ժամկետով: Սա ներկայումս լուրջ մարտահրավեր է, քանի որ Կենտրոնն անմիջականորեն ապահովում է «Հայփոստ» ՓԲԸ-ի անխափան աշխատանքը:

Հաշվի առնելով Կենտրոնի՝ ժամանակակից պահանջներին անհամապատասխանությունը, սահմանափակ տեխնիկական հնարավորությունները, գործառնական անարդյունավետությունը և կառուցվածքային թերությունները՝ անհրաժեշտ է դիտարկել Կենտրոնի վերակառուցման հնարավորությունները:

2. **Առաջարկվող լուծումը.**

Միջազգային ճանաչված փոստային և լոգիստիկ ծառայություններ մատուցող ընկերությունների առաջատար փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ փոստափոխանակման և տեսակավորման գործընթացների առավելագույն արդյունավետությունն ապահովվում է մեծ մակերես ունեցող, նորագույն տեխնոլոգիաներով հագեցած, մեկհարկանի ենթակառուցվածքներում: Նման կենտրոնների գործարկումը հնարավորություն է տալիս ապահովել գործընթացների օպտիմալ կազմակերպումը, բարձրացնել փոստային առաքանիների և բեռների մշակման արագությունն ու թողունակությունը, ինչպես նաև կատարելագործել

անվտանգության և վերահսկողական մեխանիզմները: Հետևաբար, առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է կառուցել նոր փոստափոխանակման և տեսակավորման կենտրոն, որը կգործի միջազգային չափանիշներին համապատասխան:

Նոր կենտրոնի կառուցմամբ նախատեսվում է ներդնել ավտոմատացված տեսակավորման հոսքագծեր, բարձր արդյունավետությամբ փոստային փոխադրամիջոցների համակարգ, ինչպես նաև արդիականացված անվտանգային համակարգեր, որոնք կապահովեն արագ, ճշգրիտ և անվտանգ փոստային ծառայություններ: Տեղադրվող նորարարական տեխնոլոգիաները կնպաստեն ոչ միայն ներպետական, այլև միջազգային փոստային փոխանակման որակի բարձրացմանը՝ հեշտացնելով Հայաստանի ինտեգրումը համաշխարհային փոստային շուկային:

3. **Եկամտաբերության կանխատեսումը.**

Ընկերությունը տարիներ շարունակ հանդիսացել է Հայաստանի փոստային հաղորդակցության կարևորագույն հենասյուներից մեկը՝ ապահովելով թե՛ ներպետական, թե՛ միջազգային փոստային ծառայությունների մատչելիությունն ու հուսալիությունը: Տարիների փորձն ու նորարարական լուծումները թույլ են տվել Ընկերությանը պահպանել իր առաջատար դիրքը՝ առաջարկելով լայնածավալ փոստային և լոգիստիկ լուծումներ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկաներում:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության՝ 2024 թվականի առաջին կիսամյակի տվյալները վկայում են այն մասին, որ Ընկերությունը շարունակում է մնալ ոլորտի առանցքային դերակատարներից մեկը՝ ապահովելով ներհանրապետական ծանրոցների առաքման զգալի մասը, ունենալով միջազգային փոխադրումների շոշափելի բաժին և պահպանելով առաջատար դիրքը փոստային նամակագրական թղթակցության ոլորտում:

Համաձայն վերոնշյալ տվյալների՝ հաշվետու ժամանակահատվածում միջազգային փոստային ծանրոցների 21%-ն իրականացվել է Հայփոստի միջոցով, ինչը վկայում է, որ Ընկերությունը հանդիսանում է ոլորտի հիմնական օպերատորներից մեկը՝ չնայած առկա մրցակցությանը: Ներհանրապետական ծանրոցների 87%-ի առաքումն իրականացվել է Հայփոստի կողմից, ինչը փաստում է, որ Ընկերությունը ներքին շուկայում հանդիսանում է առաջատար: Սա պայմանավորված է նրա ենթակառուցվածքային հզորություններով, որոնք հնարավորություն են տալիս ապահովել լայնածավալ և արդյունավետ առաքումներ: Նամակագրական թղթակցության ոլորտում ևս Հայփոստը պահպանել է առաջատար դիրքը՝ իրականացնելով ներհանրապետական նամակագրական թղթակցության 94%-ը: Այս ցուցանիշը փաստում է, որ գրեթե բոլոր պաշտոնական փոստային առաքումներն իրականացվում են Ընկերության միջոցով: Միջազգային նամակների 34%-ը ևս առաքվել է Հայփոստի միջոցով, ինչը կարևոր դիրք է շուկայում, սակայն միևնույն ժամանակ սա ցույց է տալիս, որ Ընկերությունը կարող է ավելի ամրապնդել իր դիրքերը՝ բարելավելով ծառայությունների արագությունը, ընդլայնելով միջազգային գործընկերային համագործակցությունը և առաջարկելով ավելի հարմարավետ ու մրցունակ առաքման պայմաններ:

Հիշյալ տվյալների համաձայն՝ Հայաստանում գործում են 52 փոստային ծառայություններ մատուցող օպերատորներ, սակայն դրանց մեծ մասը մասնագիտացած է միայն առանձին ծառայությունների ուղղությամբ: Հաշվի առնելով շուկայի մրցակցությունը՝ Ընկերությունը կարող է օգտագործել իր շուկայական դիրքը նորարարական ծառայություններ ներդնելու, մրցակցային գները պահպանելու և հաճախորդների սպասարկման որակը բարելավելու համար: Ավելին, զարգացնելով իր ենթակառուցվածքների կարողունակությունը՝ Ընկերությունը կարող է ոլորտում գործող ընկերությունների հետ համագործակցության նոր շրջանակ ձևավորել՝ առաջարկելով համատեղ լուծումներ:

Ստորև ներկայացվում է «Հայփոստ» ՓԲԸ-ի ՓՓՏԿ-ի եկամտաբերության կանխատեսումների 2 սցենար՝

1. Երբ ընկերությունը շարունակում է շահագործել ներկայիս ենթակառուցվածքը
2. Երբ ընկերությունը կառուցում է նոր ժամանակակից ենթակառուցվածք

Երկու սցենարների առանցքային ցուցանիշների՝ Փոստային եկամուտի և Համախառն շահույթ EBITDA-ի համեմատականը ներկայացված է գրաֆիկներով:







Առաջին սցենարով կանխատեսվում է, որ Ընկերությունը կշարունակի սպասարկել ծանրոցների և փաթեթների ներկայիս ծավալը, իսկ նամակների ծավալը կնվազի թվայնացման գործընթացներին զուգահեռ:

«Հայփոստ» ՓԲԸ-ի ՓՓՏԿ-ի տեխնիկական սահմանափակ հնարավորությունները թույլ չեն տալիս ընդլայնել համագործակցությունը միջազգային գործընկերների հետ, որն իր հերթին, համաձայն կանխատեսումների, բերելու է 2025-2030թթ-ին փոստային եկամտի շարունակաբար նվազման՝ 55.56% կամ 3,7. մլրդ ՀՀ դրամով և համախառն շահույթի (EBITDA-ի) նվազման 63.61% կամ 3,4.մլրդ ՀՀ դրամով:

Երկրորդ սցենարով կանխատեսվում է, որ Ընկերությունը կկառուցի նոր ժամանակակից ենթակառուցվածք՝ հագեցած նոր ավտոմատացված հոսքագծերով և մաքսային պահեստով: **Համաձայն այս սցենարի՝ 2025-2030թթ. ընթացքում Ընկերության փոստային եկամուտը շարունակաբար աճելու է 39.3% կամ 2,5. մլրդ ՀՀ դրամով, իսկ համախառն շահույթը (EBITDA-ն) աճելու է 28.96% կամ 1,5. մլրդ ՀՀ դրամով:**

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՓՓՏԿ-ի կառուցմանն ուղղվող ներդրումն ապահովելու է փոստային եկամուտի և ծավալի աճ (Ընկերության գործառնական եկամտի 60-65%-ը կազմում է փոստային եկամուտը):

Արդյունքում՝ նոր ենթակառուցվածքը թույլ կտա ավելացնել մշակվող առաքանիների ծավալը, նվազեցնել մեկ առաքանու մշակման ծախսն ու ժամանակը: Սա թույլ կտա ավելացնել միջազգային համագործակցությունը՝ միջազգային շուկայում բարձրացնելով Ընկերության տեսանելիությունը և վարկանիշը:



**Համաձայն ներկայացված գրաֆիկների՝ ՓՓԿ-ի վերակառուցման և արդիականացման արդյունքում 2025-2030 թթ.-ի ընթացքում կանխատեսվում է ներհանրապետական նամակագրական թղթակցության նվազում 70% կամ 5,9 մլն հատ, որին զուգահեռ ավելանում են ծանրոցների և փաթեթների (173% կամ 3,2 մլն հատ), միջազգային նամակների (149% կամ 72 հազ. հատ) և արագացված փոստային ծառայության (47% կամ 12 հազ. հատ) ծավալները:**

Արդյունքում՝ 2030 թ.-ին 2025 թ.-ի համեմատ կանխատեսվում է ընդհանուր փոստային ծառայությունների ծավալների նվազում 26.3%-ի չափով, սակայն դա չի հանգեցնելու եկամտի նվազման, քանի որ ծառայությունների մատուցման վճարները տարբեր են:

**Ի լրումն վերոշարադրյալի՝ էականորեն կկրճատվեն նաև աշխատավարձային և կոմունալ ծախսերը՝ 2025-2030 թթ.-ին կազմելով 304,799,306 ՀՀ դրամ:**

4. **Ակնկալվող արդյունքը.**

Տնտեսական և տեխնոլոգիական զարգացումների համատեքստում Հայփոստը կանգնած է աճող մրցակցության առաջ՝ ինչպես միջազգային, այնպես էլ տեղական մասնավոր փոստային և լոգիստիկ ընկերությունների կողմից: Թվային տեխնոլոգիաների արագ զարգացումը վերափոխում է շուկայի պահանջարկը, ինչի հետևանքով ավանդական փոստային ծառայությունների դերը նվազում է: Միևնույն ժամանակ, թվայնացման գործընթացը ստեղծում է նոր հնարավորություններ նորարարական լուծումների և ավտոմատացման ներդրման համար: Այս պայմաններում Հայփոստի հետագա առաջընթացը պահանջում է ենթակառուցվածքների արդիականացում, ավտոմատացված համակարգերի ներդրում և ծառայությունների դիվերսիֆիկացում, ինչը թույլ կտա պահպանել մրցունակությունը և բավարարել շուկայի նոր պահանջները:

Չնայած մրցակցային միջավայրի աճին՝ Հայփոստն ունի զգալի ներուժ իր գործունեության զարգացման համար: Այս համատեքստում նոր փոստափոխանակման և տեսակավորման կենտրոնի կառուցումը **կդառնա**

**ռազմավարական ներդրում**, որը **կնպաստի Ընկերության տեխնոլոգիական և տնտեսական վերափոխմանը:**

Նոր կենտրոնի գործարկումը **կնպաստի Հայփոստի եկամուտների աճին, շահույթի բարձրացմանը և ծախսերի օպտիմալացմանը**, ինչը Ընկերությունը **կդարձնի ֆինանսապես կայուն և մրցունակ**: Ավտոմատացման և տեխնոլոգիական արդիականացման շնորհիվ **կկրճատվեն գործառնական ծախսերը**, իսկ ծանրոցների տեսակավորման գործընթացը **կդառնա ավելի արդյունավետ և արագ**:

Կենտրոնի կառուցմամբ նախատեսվում է ներդնել նորարարական ավտոմատացված տեսակավորման համակարգեր: Թվայնացված կառավարման և հետագծման համակարգերի ներդրումը **թույլ կտա բարելավել հաճախորդների սպասարկումը, նվազեցնել սխալ առաքումների և տեսակավորման քանակը և բարձրացնել ծառայությունների որակը:**

Նոր կենտրոնի կառուցումը ոչ միայն **կբարձրացնի Հայփոստի մրցունակությունը,** այլև **Հայաստանը կդարձնի ավելի կարևոր տարածաշրջանային լոգիստիկ հանգույց:** Այս նախագիծը համահունչ է ՀՀ կառավարության «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությանն ու միջազգային լոգիստիկ ծրագրերին, ինչը Հայաստանի դիրքերը կուժեղացնի տարածաշրջանային և միջազգային շուկաներում:

5. **Նոր կենտրոնի հողատարածքի չափերը և նախնական բյուջեն.**

Նոր փոստի փոխանակման և տեսակավորման կենտրոնի կառուցման համար անհրաժեշտ է **3 հա** (30,000 քմ) հողատարածք, որը կապահովի արդի փոստային ծառայությունների անխափան գործունեությունը, լոգիստիկ հոսքերի օպտիմալ կառավարումն ու ժամանակակից ենթակառուցվածքների ներդրումը: **Տարածքը կբաժանվի երեք հիմնական բաղադրիչի՝ հիմնական շենք, ենթակառուցվածքներ և կանաչապատ գոտիներ:**

Կենտրոնի հիմնական շենքի համար նախատեսվում է 10,800 քմ տարածք, որը կունենա արտադրական տարածք (փոստային առաքանիների ավտոմատացված տեսակավորման, վերամշակման և բաշխման համար), վարչական տարածք

(կառավարման, օպերատիվ մոնիթորինգի և համակարգման համար), տեխնիկական տարածք (անվտանգության համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման համար), ավտոմատացման գոտի (ժամանակակից տեսակավորման և սկանավորման համակարգերի համար), մաքսային հսկողության գոտի (առաքանիների մաքսային ստուգման համար), պահեստավորման և պատվերների պահման տարածք (լոգիստիկ, տերմինալային (Cross-Docking) և ֆուլֆիլմենթ ծառայությունների համար):

Ենթակառուցվածքները և օժանդակ տարածքները կզբաղեցնեն 19,200 քմ, որոնք կներառեն բեռնման և բեռնաթափման հարթակներ (բեռնատարների հարմարավետ սպասարկման, տեսակավորված փոստային առաքանիների արագ տեղափոխման և անվտանգ բեռնման գործընթացի համար), պահեստային գոտիներ (կծառայեն որպես միջանկյալ կետ՝ ապրանքների պահպանման և վերահսկման համար), ավտոկայանատեղիներ (բեռնատարների, աշխատակիցների և սպասարկող տրանսպորտային միջոցների համար), ինժեներական ենթակառուցվածքներ (կոյուղու, ջրամատակարարման և օդափոխման համակարգերի համար):

Կենտրոնի տարածքում նախատեսվում է նաև կանաչապատ գոտիների ձևավորում, որոնք կնպաստեն օդի որակի բարելավմանը և տրանսպորտային արտանետումների վնասակար ազդեցության նվազեցմանը: Միևնույն ժամանակ, այս տարածքները կծառայեն որպես աշխատակիցների հանգստի և բարեկեցիկ աշխատանքային միջավայրի ապահովման գոտի:

Ըստ նախնական հաշվարկների՝ նոր կենտրոնի կառուցման համար կպահանջվի **շուրջ 6 մլրդ ՀՀ դրամ**: Դրանից 1,4 մլրդ ՀՀ դրամը նախատեսվում է ուղղել տեսակավորման և փոստափոխանակման գործընթացների ավտոմատացմանը, 200 մլն ՀՀ դրամը՝ համակարգչային տեխնիկայի և ծրագրային ապահովման ձեռքբերմանը, 200 մլն ՀՀ դրամը՝ անվտանգության համակարգերի ձեռքբերմանը, իսկ մնացած 4.2 մլրդ ՀՀ դրամը՝ Կենտրոնի հիմնական շենքի և հարակից տարածքների կառուցապատմանը:

Կարևոր է նշել, որ ներկայացված բյուջեն նախնական է և կարող է ենթարկվել փոփոխությունների՝ կախված նախագծման և աշխատանքների մանրամասն պլանավորումից: Վերջնական ֆինանսական գնահատականը հնարավոր կլինի ձևավորել կառուցապատման գործընթացի ավելի հստակ փուլերում:

6. **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.**

Նախագծի հաստատումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրից, համաձայն որի՝ Կառավարությունը հանձնառու է ապահովել փոստային կապի ունիվերսալ ծառայությունների հասանելիությունը, մատչելիությունը և մատուցման բարձր որակը: Այս համատեքստում կարևոր նշանակություն ունի փոստի փոխանակման նոր կենտրոնի կառուցումը, որը նպաստելու է ոլորտի արդիականացմանը, արդյունավետության բարձրացմանը և միջազգային չափանիշներին համահունչ ծառայությունների մատուցմանը:

Բացի այդ, ՀՀ կառավարությունը նաև ձգտում է Հայաստանը դարձնել տարածաշրջանային լոգիստիկ կենտրոն՝ «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնության շրջանակում: Փոստային նոր կենտրոնը կարևոր դեր կունենա միջազգային ու տարածաշրջանային կապերի ամրապնդման, փոստային փոխադրումների արդյունավետության բարձրացման և Հայաստանի լոգիստիկ ներուժի զարգացման հարցում:

Եվրոպական միության «Հայաստանի դիմակայունության և աճի ծրագրի» շրջանակում նախատեսվող աջակցությունն ուղղված է միակցվածության և կապի ոլորտներում խոշոր ներդրումներին, ինչը ևս նպաստում է նոր փոստային կենտրոնի կառուցմանը:

Նոր կենտրոնի կառուցումը ներդաշնակվում է նաև ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից մի քանիսին՝ արդյունաբերության, նորարարության և ենթակառուցվածքների զարգացում (նպատակ 9), կայուն քաղաքների և համայնքների ստեղծում (նպատակ 11), ինչպես նաև կլիմայի փոփոխության դեմ պայքար (նպատակ 13):

«Հայփոստ»-ի զարգացման ռազմավարությունը ևս ներառում է փոստային ծառայությունների արդիականացում, նորարարական տեխնոլոգիաների ներդրում և համապարփակ ցանցի ստեղծում, ինչը կբարձրացնի փոստային ծառայությունների որակը՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային չափանիշներին: